ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության
քննիչ՝ Գ. Աղաբաբյանին

Տուժողի իրավահաջորդ՝

Անդրանիկ Պողոսյանի ներկայացուցիչներ՝
1. Արթուր Ալբերտի Սաքունցից
2.Արայիկ Միքայելի Զալյանից
Հասցե՝ ք. Վանաձոր Տիգրան Մեծի 59

Հարգելի պարոն Աղաբաբյան

2015 թ. հուլիսի 18-ին ՌԴ քննչական կոմիտեի վարույթում քննված, 2015 թ. հունվարի 12-ին Գյումրիում Ավետիսյանների ընտանիքի անդամների սպանության դեպքի առթիվ հարուցված քրեական գործով, ՀՀ քննչական կոմիտեին է հանձնվել 9 հատոր քրեական գործի նյութեր, որը միացվել է թիվ 18100115 քրեական գործին:

Խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն այն մասին թե՝

1. ինչ կարգով և ինչ իրավական ակտով է ՌԴ քննչական կոմիտեից ՀՀ քննչական կոմիտե փոխանցվել քրեական գործի նյութերը:
2. Խնդրում եմ տրամադրել ՌԴ քննչական կոմիտեից ՀՀ քննչական կոմիտե փոխանցված քրեական գործի նյութերը, ուղեկցող գրության կամ որոշման պատճենը:
3. Ինչ իրավական ակտի հիման վար է փոխանցված քրեական գործի նյութերը միացվել Ձեր վարույթում քննվող թիվ 18100115 քրեական գործին:
4. Խնդրում եմ տրամադրել ՌԴ քննչական կոմիտից փոխանցված քրեական գործի նյութերը թիվ 18100115 քրեական գործին միացնելու վերաբերյալ իրավական ակտի պատճենը:

Տուժողի իրավահաջորդ Անդրանիկ Պողոսյանի ներկայացուցիչներ՝ Ա. Սաքունց

Ա. Զալյան

09.09.2015թ.